5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1040. Պետության և համայնքների կողմից կամ նրանց թույլտվությամբ զովազդային վիճակախաղեր, ~~տոտալիզատորներ~~ և այլ խաղեր անցկացնելը

1. Զովազդային վ~~Վ~~իճակախաղերի, ~~տոտալիզատորների (փոխադարձ գրազների)~~ և ռիսկի վրա հիմնված այլ խաղերի կազմակերպիչների՝ Հայաստանի Հանրապետության, համայնքների, լիազորված պետական մարմնի թույլտվություն (լիցենզիա) ստացած անձանց և խաղերի մասնակիցների հարաբերությունները հիմնվում են պայմանագրի վրա:

2. Խաղեր կազմակերպելու կանոններով նախատեսված դեպքերում խաղերի կազմակերպչի և մասնակցի միջև պայմանագիրը ձևակերպվում է վիճակախաղի տոմս, անդորրագիր կամ այլ փաստաթուղթ տալով:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված պայմանագիրը կնքելու մասին առաջարկը պետք է պայմաններ ներառի խաղերի անցկացման ժամկետի, շահումը որոշելու կարգի և դրա չափի մասին:

4. Խաղերի կազմակերպչի կողմից սահմանված ժամկետում դրանք անցկացնելուց հրաժարվելու դեպքում խաղերի մասնակիցներն իրավունք ունեն կազմակերպչից պահանջել խաղերի վերացմամբ կամ դրանց ժամկետի հետաձգմամբ պատճառված իրական վնասի հատուցում:

5. Զովազդայիյնվ~~Վ~~իճակախաղ~~, տոտալիզատոր~~ կամ այլ խաղեր անցկացնելու կանոններին համապատասխան խաղի կազմակերպիչը շահած անձանց պետք է վճարի նրանց շահումը՝ խաղեր անցկացնելու կանոններով նախատեսված չափով, ձևով (դրամով կամ բնեղենով) և ժամկետում, իսկ եթե այդ կանոններում ժամկետը նշված չէ, ապա խաղերի արդյունքները որոշելու պահից ոչ ուշ, քան տասն օրում:

6. Սույն հոդվածի 5-րդ կետում նշված պարտականությունները խաղերի կազմակերպչի կողմից չկատարվելու դեպքում զովազդային վիճակախաղում~~, տոտալիզատորում~~ կամ այլ խաղերում շահած անձն իրավունք ունի խաղերի կազմակերպչից պահանջել վճարելու շահումը՝ ինչպես նաև հատուցելու կազմակերպչի կողմից պայմանագրի խախտմամբ պատճառված վնասները: